

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

**Բաց Բաժնետիրական Ընկերություն**





ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 33, 28.09.11թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,192,401 հատ,	25,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝

<b>Տիգրան Գալստյան</b> (անուն, ազգանուն)	<b>Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ</b> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>28/09/2011թ</u> (ամսաթիվ)
<b>Դավիթ Հարությունյան</b> (անուն, ազգանուն)	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</b> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>28.09.2011թ</u> (ամսաթիվ)
<b>Արթուր Հակոբյան</b> (անուն, ազգանուն)	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ</b> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>28.09.11թ</u> (ամսաթիվ)
Ստորագրությունները հավաստում են՝			
<b>Աշոտ Օսիպյան</b> (անուն, ազգանուն)	<b>Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն</b> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>28.09.11թ</u> (ամսաթիվ)

28 սեպտեմբերի 2011 թ.

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի 2011 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 24/01 որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

«28» սեպտեմբերի 2011թ

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 24/01

### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21<sup>6</sup>-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հեռակա կարգով քվեարկության միջոցով 2011 թվականի նոյեմբերի 04-ին գումարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր ընդունել 2011 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
4. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին առաջարկել սահմանել Հաշվիչ հանձնաժողովի երեք հոգուց բաղկացած կազմ՝ հետևյալ անդամներով՝ Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Արմեն Ասատրյան, անդամներ՝ Լիլիյա Արզումանյան, Անահիտ Վարդանյան:
5. Որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2011 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել «Գրանթ Թորնթոն Ամի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
6. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն Հավելված 2-ի:
7. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին ծանուցման ձևը՝ համաձայն Հավելված 3-ի, բաժնետերերին ծանուցել և քվեաթերթիկները տրամադրել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտել 2011 թվականի նոյեմբերի 04-ին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի սեպտեմբերի 28-ից:

Խորհրդի նախագահ



Բ.Բեգլարյան

ՀԱՎԵԼ ՎԱԾ 1  
Հանձնառված  
ԱՐԱՐԱՏՔԱՆԿ ԲԲԸ խորհրդի 2011 թվականի  
սեպտեմբերի 28-ի N 24/01 որոշմամբ

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

*ԱՐԱՐԱՏՔԱՆԿ Բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի  
արտահերթ ընդհանուր ժողովի*

1. Հաշվիչ հանձնաժողով ձևավորելու մասին:
2. ԱՐԱՐԱՏՔԱՆԿ Բաց բաժնետիրական ընկերության 2011 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ հաստատելու մասին:
3. ԱՐԱՐԱՏՔԱՆԿ Բաց բաժնետիրական ընկերության խորհրդի նախագահի և խորհրդի անդամների ամսական վարձատրության չափի վերանայման մասին:



ՀԱՎԵԼՎԱԾ 3

Հաստատված

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ԲԲԸ Խորհրդի 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N 24/01 որոշմամբ

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

*ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի մասին*

### Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Պուշկինի 19) հեռակա քվեարկության միջոցով 2011թ.-ի նոյեմբերի 04-ին անցկացնում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

Սույնով հայտնում ենք, որ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2011 թվականի սեպտեմբերի 30-ին:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտվում է 2011 թվականի նոյեմբերի 04-ին ժամը 18.00-ին:

Հարցեր առաջանալու դեպքում Դուք կարող եք պարզաբանել ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ բաց բաժնետիրական ընկերության վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-79-61), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում ([www.araratbank.am](http://www.araratbank.am)) սկսած 2011 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև 2011 թվականի նոյեմբերի 04 -ը ներառյալ:

Սույն ծանուցմանը կից Ձեզ է ներկայացվում նաև ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ԲԲԸ  
վարչության նախագահ

Աշոտ Օսիպյան

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Հասցե՝ 0010, ԳՂ, ք. Երևան, Պուշկինի 19 հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

20 սեպտեմբերի 2011թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն N 849 Ա

### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի Հոդված 209-ը և 166-ը, "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, "Բանկերի և բանկային գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21<sup>10</sup>-ի 3-րդ մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 14.9-ի կետի բ) ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի ԱՄՆ այցի շրջանակներում Լոս Անջելես քաղաքում կայանալիք ֆինանսաբանկային կոնֆերանսին մասնակցելու նպատակով 2011 թվականի սեպտեմբերի 23-ից մինչև 2011 թվականի սեպտեմբերի 29-ը ներառյալ Բանկի գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանին գործուղել ԱՄՆ, ք. Լոս Անջելես:
2. Բանկի գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը 2011 թվականի սեպտեմբերի 23-ից մինչև 2011 թվականի սեպտեմբերի 29-ը ներառյալ դնել Բանկի գործադիր տնօրենի առաջին տեղակալ Արթուր Հակոբյանի վրա:
3. Բանկի Հաշվապահական հաշվառման վարչությանը՝ գործուղման հետ կապված ծախսերը կատարելու համար տրամադրել անհրաժեշտ առհաշիվ գումար:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գործադիր տնօրեն՝



Աշոտ Օսիպյան